ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դոցենտ

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԲԻԶՆԵՍԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Ելնելով «կայուն զարգացման եռանկյունու» շրջանակներում կայունության սկզբունքի սահմանումից՝ ժամանակակից գործարարության առջև խնդիր է դրված միաձուլելու գործունեության երեք փոխկապված նպատակները՝ տնտեսական արդյունավետություն, էկոլոգիական պատասխանատվություն և սոցիալական ակտիվություն: Հոդվածում դիտարկվել են էկոլոգիական պատասխանատվության՝ որպես բնապահպանական վնասների նվազեցման և անարդյունավետ բնօգտագործման սահմանափակման միջոցառումներին մասնակցության խնդիրները:

Հիմնաբառեր. *բնապահպանական պատասխանատվություն, ռազմավարական սկզբունք, բնօգտագործում, կառավարում*
JEL: L52, Q57, Q59

Ձեռնարկատիրության սոցիալ-էկոլոգիական պատասխանատվության հասկացությունը ի սկզբանե բացատրվում էր որպես տնտեսագիտության մեջ հայտնի «աղտոտողը վճարում է» բնօգտագործման հիմնարար սկզբունք: Միաժամանակ, ներդրվեց նաև կայունության սկզբունքի սահմանում՝ «կայուն զարգացման եռանկյունու» շրջանակներում: Այս մոտեցման համաձայն՝ ժամանակակից գործարարության առջև խնդիր է դրված միաձուլելու գործունեության երեք փոխկապված նպատակները՝ տնտեսական արդյունավե-

տություն, էկոլոգիական պատասխանատվություն և սոցիալական ակտիվություն: Անգամ հաշվի առնելով այն փաստը, որ «կայուն զարգացման եռանկյունու» բոլոր երեք կողմերը իրական կյանքում սերտ փոխկապված են, պարտադիր չէ միաժամանակ կիրառել բոլոր մոտեցումները նպատակի իրականացման ժամանակ:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ, չնայած բնապահպանական վճարների դրույքաչափերի էական բարձրացմանը, արտանետման անշարժ աղբյուրներից շրջակա միջավայր արտանետումների ծավալները ՀՀ-ում վերջին տասը տարվա ընթացքում ավելացել են գրեթե 2,5 անգամ:

Աղյուսակ 1

Արտանետումների և արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալների ինդեքսները ՀՀ-ում[1]

	2005	*2006*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2014*	*2015*
Արտանետ. անշարժ աղբյ. մթնոլորտ արտ. նյութեր, (հազ. տոննա)	51.1	43.3	34.4	74.7	97.5	114.6	117.4	128.4	128.9
Արտանետումների ծավալի ինդեքս (նախորդ տարվա նկատմամբ, %)	-	84.7	100.5	217.2	130.5	117.5	102.4	102.0	107,6
Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքս (նախորդ տարվա նկատմամբ, %)	107.6	99.1	101.7	92.4	109.7	113.9	108.8	106.9	105.0

Հարկ է նշել, որ արդյունաբերական արտադրության ֆիզիկական ծավալների ինդեքսների փոփոխությունը այդ ժամանակաշրջանում տատանվել է 92.4 տոկոսից (2009 թ.) 109.7 տոկոսի (2010 թ.) սահմաններում (աղյուսակ 1):



Գծապատկեր 1. ***Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը (հազ. տ)***

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2016, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 204, 254:

Դա ոչ միայն վկայում է էկոլոգիական օրենսդրության ցածր արդյունավետության, այլ նաև ՀՀ-ում բիզնեսի էկոլոգիական պատասխանատվության անբավարար մակարդակի մասին:

Սովորաբար թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում հիմնական ուշադրությունը դարձվում է բիզնեսում բնապահպանական պարտավորությունների և դրանց ֆինանսատնտեսական ցուցանիշների նկատմամբ դրական ազդեցության արդյունքում ստացվող սիներգետիկ (փոխգործակցական) ազդեցությունների հնարավորության վրա: Սիներգետիկ ազդեցությունն արտահայտվում է կարճաժամկետ և երկարաժամկետ տեսլականում բիզնեսի կայուն մրցունակությամբ:

Ներկայումս սոցիալ-էկոլոգիական պատասխանատվության մասին պատկերացումները տնտեսագիտության մեջ բավական լայն զարգացում են ստացել: Որպես հիմք՝ կարելի է ներկայացնել հետևյալ սահմանումը. սոցիալ-էկոլոգիական պատասխանատվությունը ձեռնարկատիրական գործունեության գիտակցված և մոտիվացնող մասնակցությունն է բնապահպանական վնասների նվազեցման և անարդյունավետ բնօգտագործման սահմանափակման միջոցառումներին, ինչպես նաև հասարակական էկոլոգիական բարիքների ապահովման կազմակերպման գործընթացի նախաձեռնությունն է[2]: Դրա հիմքում բնապահպանական և սոցիալական պատասխանատվության ձեռնարկատիրության սկզբունքներն են, որոնք ներկայացնում են ազատ նախաձեռնող գործունեությունը էկոլոգիական ապահովության գործում:

Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ բնապահպանական պատասխանատվությունը ենթադրում է ոչ այնքան ձեռնարկության գործունեության արդյունքում արտաքին միջավայրին հասցված վնասի փոխհատուցում, որքան վնասի մասին նախազգուշացնող միջոցառումների կազմակերպում[3]: Ուստի ձեռնարկության կառավարման ընդհանուր համակարգում ավելի մեծ ուշադրություն է դարձվում բնապահպանական մենեջմենթին, որն, իր հերթին, կոչված է բացահայտելու նաև բիզնեսի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական բնույթի հեռանկարներ: Արտադրական ձեռնարկության դեպքում, օրինակ՝ դրական հեղինակության ձևավորման ժամանակ, էկոլոգիապես պատասխանատու մասնակիցները ստանում են մրցակցային առավելություններ[4]:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ ներկա մրցակցային միջավայրում բնապահպանական մարտահրավերները ոչ միայն ռիսկեր, այլ նաև էական շուկայական հնարավորություններ են ներկայացնում:

Բիզնեսի բնապահպանական պատասխանատվության իրական մակարդակը արտացոլվում է էկոլոգիական խնդիրների լուծման նախաձեռնությամբ: Այդ պահանջին ուշադրություն է դարձրել Մ.Պորտերը՝ մրցակցային առավելությունների մոդելների վերլուծության ժամանակ, ով առաջինը փորձեց հասկանալ՝ հնարավոր է արդյոք բիզնեսում հասնել տնտեսական և բնապահպանական բարձր ցուցանիշների[5]: Հետևելով այս մոտեցմանը՝ պետա-

---

[2] Տե՛ս **Пахомова Н.В., Гребешкова Г.В.,** Социально-экологическая ответственность и конкурентоспособность бизнеса: возможен ли синергетический эффект? “Проблемы современной экономики”, N 2 (26), 2008:

[3] Տե՛ս **Костин А.Е.,** Корпоративная социальная ответственность и устойчивое развитие: мировой опыт и концепция для России, М., “Маркетинг в России и за рубежом”, 2006:

[4] Տե՛ս **Дафт Р. Л.,** Менеджмент. С.-Петербург, “Питер”, 2011, էջ 161:

[5] Տե՛ս **Портер М.,** Конкурентное преимущество. Как достичь высокого результата и обеспечить его устойчивость. М., “Альпина Бизнес Букс”, 2005:

կան խիստ էկոլոգիական կարգավորման ներդրումը խթանում է տեղական և միջազգային շուկաների արագ զարգացող ոլորտների ձևավորում: Արդյունքում ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ ոչ միայն աստիճանական, այլ նաև արմատական նորարարությունների, միաժամանակ՝ արտաքին միջավայրի որակի ու բիզնեսի մրցունակության բարձրացման համար:

Այսօր բիզնեսի հաջողության կարևորագույն նախապայմաններից են երեք փոխկապված խնդիրներ. առաջին՝ կորպորատիվ մրցունակություն (Corporate Competitiveness), երկրորդ՝ կորպորատիվ ղեկավարության որակավորման բարձրացում (Corporate Governance), երրորդ՝ ձեռնարկությունների կողմից քաղաքացիների սոցիալական պատասխանատվության գործառույթների իրականացում: Այս խնդիրներից վերջինը կարևորվեց քաղաքակիրթ գործարարության սկզբունքներից մեկի ձևավորմամբ. տվյալ դեպքում նկատի ունենք կորպորատիվ քաղաքացիության սկզբունքը (Corporate Citizenship): Բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը ներկայումս ներառում է գործարարության սուբյեկտների կողմից այն նորմերի և կանոնների պահպանությունը, որոնք որոշված են օրենսդրությամբ, ազդում են առանձին սոցիալական խմբերի և ամբողջ հասարակության կենսամակարդակի վրա: Այս առումով, ինչպես նշում են արտասահմանյան մասնագետները, էկոլոգիան, ինչպես և որակի բարձրացումը և նորարարությունները առաջատար ուղղություններից են, որոնցով ընթացիկ հարյուրամյակում մղվում են հիմնական մրցակցային պայքարները[6]: Ռազմավարական բնապահպանական մենեջմենթը, որը ներառվում է արտադրական ձեռնարկության ռազմավարական մենեջմենթի համակարգում, կոչված է հայտնաբերելու էկոլոգիական բնույթի հեռանկարներ:

Ժամանակակից պատկերացումների տեսանկյունից՝ բնապահպանական մենեջմենթը կարելի է սահմանել որպես կազմակերպության (ձեռնարկության) կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս, որը լուծում է մրցունակության ապահովման խնդիրը՝ բավարարելով տվյալ ոլորտի էկոլոգիական պահանջները:

Հետաքրքրություն է առաջացնում բնապահպանական մենեջմենթի ևս մեկ հատկանիշ: Էկոլոգիական մենեջմենթն ընդլայնում է կառավարչական գործունեության սահմանները և նպատակները՝ ընդգրկելով արտաքին միջավայրի մարտահրավերները: Նախ՝ այս մոտեցմամբ, բնապահպանական խնդիրները չեն տարբերվում գործարարության այլ կողմերից, երկրորդ՝ բնապահպանական հետևանքները, ծախսերը դառնում են բիզնեսի բաղկացուցիչ մաս:

Կորպորատիվ բնապահպանական մենեջմենթին բնորոշ էկոլոգիական խնդիրների գումարային հաշվարկի փոխարեն, նախնական փուլում, կիրառվում է ձեռնարկատիրական գործունեության նոր ուղղություն, որը հիմնվում է կայուն զարգացման սկզբունքի վրա: Այս ուղղությունների տարբերությունները ներկայացված են աղյուսակ 2-ում: Բնապահպանական մենեջմենթի համակարգերի ձևավորման ժամանակ առաջանում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ բեռնափոխադրումների կրճատումը, թափոնների վերամշակումը, հումքի երկրորդական օգտագործումը, արտադրության որակի և ապահովության մակարդակի բարձրացման համակարգերի ներդնումը, արտաքին միջավայրի պահպանմանն ուղղված կառավարման կազմակերպումը, էկոլո-

[6] Տե՛ս **Костин А.Е.,** նշվ. աշխ.:

գիական աուդիտի կազմակերպումը: Ձեռնարկությունում, հիմնականում, փորձ է արվում կիրառելու բնապահպանական մենեջմենթը՝ արդեն գործող կառավարման համակարգում:

Աղյուսակ 2

Ձեռնարկատիրական գործունեության ուղղությունների փոփոխություն

Ցուցանիշներ	*Ուղղվածություն(հարացույց)*	
	Ձեռնարկության կառավարում՝ հաշվի առնելով էկոլոգիական խնդիրները	*Ձեռնարկության կառավարում՝ ուղղված կայուն զարգացման պահանջների կատարմանը*
ընդհանուր բնութագիրը	«քիչ, քան...»	«այնքան, որքան պետք է»
բնապահպանական վնասի բնութագիրը	հասցված	ակնկալվող
փոխըմբռնում	ֆիզիկական	մտավոր
գործողությունների պարամետրեր	նյութական էմիսիա	ոչ նյութական թողարկում
հասարակական հետաքրքրության օբյեկտներ	թողարկում՝ որպես գործընթացների և արտադրության հետևանք	գործընթացներ և արտադրություն՝ որպես կենսակերպի հետևանք
հաջողության նախապայմաններ	էկոարդյունավետ	բավականություն
ուղղվածություն	կապիտալի սեփականատերերին	հետաքրքրված անձանց/խմբերին
նախաձեռնողներ	պետական մարմիններ	ոչ պետական մարմիններ

Կառավարչական համակարգի հնարավորությունները սահմանափակված են, եթե կիրառվող կառուցվածքները խոչընդոտում են անհրաժեշտ քաղաքականության ներդրմանը: Ցանկացած ձեռնարկություն պետք է իր կառուցվածքներում ներառի էկոլոգիական պահանջները: Այլ կերպ ասած՝ կազմակերպչական կառուցվածքը է պետք է հարմարեցվի նոր պահանջներին, իսկ արտաքին միջավայրի պահպանությունը հուսալի կերպով ընդգրկվի ձեռնարկության կառավարչական համակարգում:

Վերջին հաշվով, բնապահպանական մենեջմենթի նպատակն է նվազեցնել գործարարության բացասական ազդեցությունները արտաքին միջավայրի վրա, ապահովել արտադրական գործընթացների բնապահպանական ապահովության բարձր մակարդակ:

Բնապահպանական մենեջմենթը ընդունված է դիտարկել որպես ռազմավարական մենեջմենթ հասկացության մաս և ներառել ժամանակակից անվնաս արտադրության գաղափարի մեջ, որի պարագայում հնարավոր է հասնել էկոլոգիական և տնտեսական օպտիմալ ցուցանիշների հարաբերակցության[7]: Ձեռնարկատիրական գործունեության՝ արտաքին միջավայրի նկատմամբ բացասական երևույթների նվազեցման, արտադրական գործընթացների էկոլոգիական անվտանգության ապահովման խնդիրների լուծումը բնապահպանական մենեջմենթի հիմնական նպատակն է: Միևնույն ժամանակ, նշված խնդիրների լուծումը պետք է զուգակցվի կազմակերպության այլ նպատակների բարեհաջող իրականացման հետ: Էկոլոգիական մենեջմենթ վարելու հայեցակարգի ժամանակակից գաղափարն այն է, որ բիզնեսը բաղկացած է ոչ միայն տնտեսական զարգացման գործոններից, այլ նաև կրում է սոցիալական և բնապահպանական պատասխանատվություն:

[7] Տե՛ս **Диксон Д., Скура Л., Карпентер Р., Шерман П.,** Экономический анализ воздействий на окружающую среду. М., “Вита-Пресс”, 2010, էջ 184:

Սահմանափակ ռեսուրսների պայմաններում գործում է ալլոկացման (հատկացման) մեխանիզմ, այսինքն՝ ռեսուրսների տեղաբաշխումն իրականացվում է շուկայական կառուցակարգի գործունեության արդյունքում: Արտադրական ձեռնարկությունը շուկայի սուբյեկտ է, և դրա գործունեությունն ընդգրկվում է միկրոտնտեսական հիմնական մոդելների շրջանակներում: Մասնավորապես՝ ենթադրվում է, որ ցանկացած ձեռնարկություն արտադրական ծավալների վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակ ղեկավարվում է շահույթն առավելագույնի հասցնելու նպատակով:

Արտադրության ծավալը կարող է ապահովվել տարբեր արտադրական գործոնների համադրությամբ: Յուրաքանչյուր ձեռնարկություն ընտրում է այնպիսի արդյունավետ արտադրական միջոցներ, որոնք նվազեցնում են վերջնական արտադրանքի ծավալների ապահովման ծախսերը: Տվյալ որոշումը կարող է ընդունվել միայն այն դեպքում, եթե հայտնի է բոլոր արտադրական գործոնների գինը:

Հետևաբար՝ կարելի է հաշվարկել արտադրության նվազագույն ծախսերը ցանկացած արտադրական ծավալների համար: Ձեռնարկության ծախսերի գործառույթը սահմանում է նվազագույն ծախսերից արտադրական ծավալների կախվածությունը: Հաշվարկված շուկայական գնի դեպքում ձեռնարկությունը կթողարկի այնքան արտադրանք, որի դեպքում առավելագույնի կհասնի շահույթի և ծախսերի հարաբերակցությունը[8]:

Ձեռնարկության տնտեսական մոդելը պետք է արտահայտի տնտեսական գործընթացի հատկանիշները, դրա էությունը և գործունեության պայմանները: Յուրաքանչյուր գործընթաց, այդ թվում նաև օպտիմալացման, պետք է լինի ամբողջական: Ձեռնարկության տնտեսական մոդելի ձևավորման ժամանակ առաջին հերթին հարկ է սահմանել կառավարչական ներգործությունը, օգտագործվող տվյալները, սահմանափակումները, ցուցանիշները և որակի չափորոշիչները: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման ընթացքում ստեղծվում է իրավիճակ, երբ տնտեսական համակարգը չափազանց բարդ կառուցվածք է ունենում, բացակայում են մաթեմատիկական մեթոդները, գծագրերը: Այս դեպքում անհրաժեշտ է դառնում ուսումնասիրվող օբյեկտի պարզեցումը, որպեսզի դա հնարավոր լինի ներգրավել այնպիսի կառուցվածքներում, որոնք տրվում են մաթեմատիկական բնութագրության: Միաժամանակ, պարզեցման մակարդակը պետք է լինի այնպիսին, որ տվյալ տնտեսական օբյեկտի բոլոր հիմնական բնութագրիչները համապատասխանեն մոդելավորման նպատակներին (գծապատկեր 2):

Ռազմավարական կառավարման հիմնական խնդիրը աշխատուժի, գիտատեխնիկական, նյութական և բնական ռեսուրսների ռացիոնալ շահագործման առավելագույն արդյունքների ապահովման ծրագրերի նախագծումն ու իրագործման մեթոդների կիրառումն է: Արտադրական ձեռնարկության կառավարման համակարգը սահմանում է արտաքին միջավայրում ռազմավարական կողմնորոշման հայեցակարգերը՝ հաշվի առնելով այն գործոնները, որոնք ազդում են ձեռնարկատիրության արդյունավետ կազմակերպման վրա:

---

[8] Տե՛ս **Пахомова Н.В., Рихтер К.К.,** Экономика природопользования и экологический менеджмент. СПб., “ОЦЭиМ”, 2007, էջ 28:



Գծապատկեր 2. *Արտադրական համակարգի տնտեսական մոդելի գործունեություն*

Հետազոտությունները ցույց են տվել, որ կազմակերպության կառավարման ռազմավարության տեսակն ուղղակիորեն կախված է տվյալ բիզնեսի էկոլոգիական պատասխանատվության չափից: Այն կազմակերպությունը, որը միայն ռազմավարության արտաքին միջավայրի նորմատիվ պահանջներն է բավարարում (բավարարության ռազմավարություն), չի կարող ունենալ բնապահպանական մեծ պատասխանատվություն: Նվազեցնելով ձեռնարկության արտանետումները մինչև արդյունավետ մակարդակի (փոխզիջման ռազմավարություն)՝ վերջինս կարող է ունենալ միայն միջին մակարդակի պատասխանատվություն: Բարձր էկոլոգիական պատասխանատվությամբ գործարարությունը պետք է առաջնորդվի հավասարակշռված բնօգտագործման ռազմավարությամբ, որը կհամապատասխանի ռազմավարական մենեջմենթի միտումներին:

Մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում կազմակերպության կառավարման գործընթացը, բիզնեսի բնապահպանական պատասխանատվության տեսանկյունից, կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

Աղյուսակ 3

Բնապահպանական պատասխանատվությամբ կառավարման տեսակները

Էկոլոգիական պատասխանատվության մակարդակ	*Կազմակերպության գործունեություն*	*Ռազմավարության տեսակ*
1. Ցածր (պասիվ կազմ.)	1. Արտադրատեխնիկական փուլի ավարտից հետո արտանետումների չեզոքացում 2. Աղտոտման նվազեցմանն ուղղված միջոցառումներ 3. Բնապահպանական հաշվետվության պահանջների կատարում 4. Էկոլոգիական ծառայության առկայություն	Բավարարության ռազմավարություն Նորմատիվային մենեջմենթ
2. Միջին (արդյուն. կազմ.)	1. Արտանետումների նվազեցում 2. Ներքին էկոլոգիական աուդիտ 3. Երկարաժամկետ բնապահպանական միջոցառումներ 4. Կառավարիչների պատասխանատվություն էկոլոգիական պարամետրերի պահպանման համար	Փոխզիջման կամ անխուսափելի վնասի ռազմավարություն Արդյունավետ կառավարում

3. Բարձր (ակտիվ կազմ.)	1. Համապատասխանություն միջազգային շուկաներում բնապահպանական չափորոշիչներին 2. Կայուն զարգացման սկզբունքի արտահայտում կազմակերպության հաշվետվություններում 3. Արտաքին և միջազգային աուդիտ 4. Արտանետումների նվազեցում՝ հաշվի առնելով տարածաշրջանի յուրացման ներուժը	Հավասարակշռված բնօգտագործման ռազմավարություն էկոլոգիապես պատասխանատու կառավարում

Բարձր յուրացման ներուժով տարածաշրջանում էկոլոգիապես պատասխանատու գործարարությունը կարող է հիմնվել էկոարդյունավետ ռազմավարության վրա, որը նախատեսում է և՛ էկոչափանիշների պահպանում, և՛ բնապահպանական միջոցառումներ: Տվյալ ռազմավարությունը չի բացառում արտանետման ծախսերի առկայությունը: Արտաքին միջավայրի վնասը անխուսափելի է դառնում: Հետևաբար՝ տվյալ ռազմավարության բնապահպանական պատասխանատվության մակարդակը ցածր է: Ըստ այդմ՝ անգամ հարմարման հնարավորության բարձր մակարդակի դեպքում արտաքին միջավայրին երկարաժամկետ վնաս հասցնելը կարող է հանգեցնել թողարկումների կուտակման, հետևաբար՝ տարածաշրջանի կազմալուծման:

Ռազմավարական կառավարման ոլորտում մեր կատարած վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ միտումները.

1. Ռազմավարական կառավարման անփոխարինելի մասերից է բնապահպանական կառավարումը, ըստ որի ձեռնարկության մրցունակության առավելությունները պայմանավորված են բիզնեսի էկոլոգիական պատասխանատվության մակարդակով:

2. Ձեռնարկության ռազմավարական կառավարումը, ընդհանուր առմամբ, ունի հավասարակշռված բնօգտագործման սահմանաչափերի զարգացման միտում: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում կիրառելու գործարարության համար կարևոր սկզբունքներ, որոնցից են.

- ձեռնարկության տեխնոլոգիական բազայի դինամիկ զարգացում,
- բնապահպանական վճարների մասով ծախսերի նվազեցում,
- բարձր արդյունավետություն ունեցող ներդրումային քաղաքականության պլանավորում,
- ձեռնարկության զարգացման սցենարների կանխատեսում՝ հիմք ընդունելով էկոլոգիական ռազմավարական կառավարումը:

Ակնհայտ է, որ էկոլոգիական պատասխանատվության սկզբունքների կիրառմամբ արտադրական ձեռնարկության կառավարումը, ռազմավարական մենեջմենթի շրջանակներում, կարևորագույն հիմք է՝ առանց որի հնարավոր չէ իրականացնել ձեռնարկատիրության հիմնական առաքելությունը:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2016, Եր., ՀՀ ԱՎԾ 2016:
2. Пахомова Н.В., Гребешкова Г.В., Социально-экологическая ответственность и конкурентоспособность бизнеса: возможен ли синергетический эффект? “Проблемы современной экономики”, N 2 (26), 2008.
3. Костин А.Е., Корпоративная социальная ответственность и устойчивое развитие: мировой опыт и концепция для России. М., “Маркетинг в России и за рубежом”, 2006.
4. Дафт Р. Л., Менеджмент. С.-Петербург, “Питер”, 2011.
5. Портер М., Конкурентное преимущество. Как достичь высокого результата и обеспечить его устойчивость. М., “Альпина Бизнес Букс”, 2005.
6. Бабина Ю.В., Варфоломеева Э.А., Экологический менеджмент. М., “Перспектива”, 2007.
7. Магомадова Т.Л., Косякова И.В., Оптимизация производственно-хозяйственной деятельности промышленного предприятия с учетом эколого-экономического анализа. “Вестник Самарского государственного университета” (гуманитарная серия), №9(90), 2011.
8. Диксон Д., Скура Л., Карпентер Р., Шерман П., Экономический анализ воздействий на окружающую среду. М., “Вита-Пресс”, 2010.
9. Пахомова Н.В., Рихтер К.К., Экономика природопользования и экологический менеджмент. - Спб., “ОЦЭиМ”, 2007.

ГАЙК АКОПЯН
Доцент кафедры экономики природопользования АГЭУ, кандидат экономических наук

Формирование стратегии управления промышленным предприятием на основе принципов экологической ответственности бизнеса.– Исходя из определения принципа стабильности, в рамках «треугольника устойчивого развития», перед современным бизнесом стоит задача сплавить три взаимосвязанные цели практической деятельности: экономической эффективности, экологической ответственности и социальной активности. В статье рассматривались проблемы экологической ответственности как участия в мероприятиях по снижению экологических рисков и ограничению неэффективного природопользования.

Ключевые слова: *экологическая ответственность, стратегический принцип, природопользование, управление.*
JEL: L52, Q57, Q59

HAYK HAKOBYAN
Associate Professor at the Chair of Environmental Economics at ASUE, PhD in Economics

Formation of the Management Strategy by Industrial Enterprise Based on the Principles of Environmental Responsibility of Business.– Proceeding from the definition of the principle of stability within the "triangle of sustainable development", modern business faces the task of fusing three interrelated goals of practical activity: economic efficiency, environmental responsibility and social activity. The article has examined the problems of environmental responsibility, as participation in activities to reduce environmental risks and limit inefficient use of natural resources.

Key words: *ecological responsibility, strategic, principle, nature management, management.*
JEL: L52, Q57, Q59